# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 64

«28» 03 2021 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 5 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցների աշխատաժամանակի արդյունավետ բաշխումը և պաշտոնեական պարտականությունների համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի մարտի 2-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելվածի 20-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 3) իր պաշտոնեական պարտականությունների կատարման և լիազորությունների իրականացման հետ համատեղ գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու հետ՝ շաբաթական մինչև 8 ժամ տևողությամբ: Եթե նման գործունեությամբ զբաղվելու ժամանակահատվածը չի գերազանցում շաբաթական 4 ժամը, ապա ՀՀ դատախազությունում դատախազի կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձը յուրաքանչյուր ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների համար համապատասխանաբար մինչև սեպտեմբերի 15-ը և փետրվարի 15-ը ՀՀ դատախազության

անձնակազմի կառավարման վարչություն է ներկայացնում ուսումնական պլան-գրաֆիկ՝ աշխատավայրից բացակայության ժամերի նշումով: Եթե գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու ժամանակահատվածը կազմում է շաբաթական 4-8 ժամ, ապա ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազի պաշտոն զբաղեցնող անձինք ՀՀ դատախազության անձնակազմի կառավարման վարչություն են ներկայացնում նաև ՀՀ գլխավոր դատախազի կամ ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալի կողմից առկա համաձայնության մասին վկայող փաստաթուղթ (դատախազի կողմից նախապես ներկայացված զեկուցագիր՝ համապատասխան մակագրությամբ), իսկ ՀՀ դատախազության մյուս ստորաբաժանումներում դատախազի պաշտոն զբաղեցնող անձինք՝ անմիջական վերադաս դատախազի (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում՝ ՀՀ զինվորական դատախազի) կողմից առկա համաձայնության մասին վկայող փաստաթուղթ: Եթե գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու ժամանակահատվածը կազմում է շաբաթական 4-8 ժամ, ապա ՀՀ դատախազությունում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք ևս ներկայացնում են անմիջական վերադասի կողմից առկա համաձայնության մասին վկայող փաստաթուղթ: Գիտական, մանկավարժական, ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու նպատակով տրամադրվող աշխատաժամանակը չպետք է բաշխվի այնպես, որ ՀՀ դատախազությունում դատախազի կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձը աշխատանքային ամբողջ օրը բացակայի աշխատավայրից.»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո, սույն հրամանի 1-ին կետով սահմանված կարգավորումների համաձայն, 2021-2022թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ դատախազության անձնակազմի կառավարման վարչություն են ներկայացվում մինչև 2021 թվականի հոկտեմբերի 10-ը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**